ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 2024թ. սեպտեմբերի 12-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 27-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց առաջ, խորհրդի նախագահի առաջարկով, խորհրդի անդամները ոտնկայս ծափահարեցին և շնորհավորեցին ֆակուլտետի երախտավոր, անվանի գիտնական, արժանի քաղաքական գործիչ, խորհրդի անդամ, ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Վարդան Բաբկենի Բոստանջյանի ծննդյան 75-ամյակը: Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, ջերմ և հուզիչ խոսքերով, հոբելյարին շնորհակալագրեր հանձնեց ֆակուլտետի և ԵՊՀ ռեկտորի անունից:

Շնորհավորանքի արժանացան նաև Թուրքմենստանի տնտեսագիտության և կառավարման պետական ինստիտուտի կազմակերպած «Համաշխարհային տնտեսություն» խորագրով միջազգային հեռավար օլիմպիադայում հաղթած ֆակուլտետի ուսանողները՝ Զինա Ղազարյանը, Ալեն Ղազարյանը, Էվա Միրզոյանը և Միդա Գյուրջօղլյանը, հանդիսավորությամբ ստանալով իրենց դիպլոմները: Թիմի մարզիչ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Հայրապետյանն առանձնահատուկ շնորհակալության արժանացավ:

Ուսումնական տարվա առաջին նիստի անցկացման կապակցությամբ, խորհրդի նախագահ Կ.Խաչատրյանը հանդես եկավ շնորհավորական ուղերձով՝ նշելով, որ գիտխորհրդի կազմից սովորողի կարգավիճակի դադարեցման հիմքով հանվել են ԳԽ սովորող անդամներ՝ Գոհար Մկրտչյանը, Անգելինա Սարգսյանը և Դավիթ Մանուչարյանը: Ներկայացրեց ԳԽ նորընտիր սովորող անդամներին՝ Բենիկ Արտեմի Բալայան (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող), Հայկ Կամոյի Արզումանյան (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող), Սուսաննա Ռաֆիկի Բաղդասարյան (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի): Նաև տեղեկացրեց, որ աշխատանքային հարաբերությունների դադարեցման հիմքով ԳԽ կազմից հանվել է ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Միքայել Միքայելյանը և որպես ընտրովի անդամ հաստատվել նույն ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Թորոս Թորոսյանը: ԳԽ նախկին անդամ, ֆակուլտետի մեթոդխորհրդի նախկին նախագահ, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.թ. երջանկահիշատակ Գագիկ Սերյոժայի Գալստյանի փոխարեն գիտխորհրդի անդամ է ֆակուլտետի նորանշանակ մեթոդխորհրդի նախագահ, Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գագիկ Իշխանի Վարդանյանը:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է)։

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայցորդների ատեստավորում
2. Նոր ընդունված առկա ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում
3. Պրոֆեսորի օգնականների հաստատում
4. Անվանական կրթաթոշակառուների հաստատում
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգի (նոր խմբագրությամբ) հաստատում
6. Ընթացիկ հարցեր
   6.1 Մրցութային հանձնաժողովի անդամի ընտրություն
   6.2 Հայցորդի թեկնածուական ատենախոսության թեմայի վերաձևակերպում
   6.3 Փոխատեղման հավակնորդ ուսանողների հաստատման վերաբերյալ
   6.4 Ֆակուլտետի 90-ամյակի գիրք-ալբոմի հրատարակման երաշխավորություն

1. ԼՍԵՑԻՆ. Հայցորդների ատեստավորման մասին հարցը։

1. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ողջունելի է այն փաստը, որ հայցորդների ատեստավորմանը մասնակցում է ԵՊՀ Դոկտորական կրթության կենտրոնի տնօրեն Արմեն Աշոտի Սարգսյանը։ Հավելեց, որ ատեստավորման ներկայացված հայցորդները Կառավարման և գործարարության ամբիոնից են և ձայնը փոխանցեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին։

2. Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի հայցորդները վեցն են՝ Վարդանյան Սարգիս Ավետիքի (6-րդ տարի), Հայրապետյան Գայանե Վարուժանի (5-րդ տարի), Պետրոսյան Սյուզաննա Արմենի (3-րդ տարի), Հակոբյան Ծուլի Արմենի (2-րդ տարի), Թևոսյան Սարգիս Խաչատուրի (2-րդ տարի), Մարգարյան Հայկ Արմենի (2-րդ տարի)։

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Սարգիս Ավետիքի Վարդանյանի «Ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման հիմնախնդիրներն արդյունաբերական կազմակերպություններում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Վ.Հ. Առաքելյան) ատենախոսության 3-րդ գլուխը պատրաստ է։ Տարվում են աշխատանքներ ատենախոսությունն ավարտուն տեսքի բերելու ուղղությամբ։ Հանձնել է կրթական

բաղադրիչի մաս կազմող բոլոր առարկաների ստուգարքներն ու քննությունները, ինչպես նաև մասնագիտական քննությունը: Տպագրվել է 1 հոդված:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Գայանե Վարուժանի Հայրապետյանի «Ներդրումային գրավչության հիմնախնդիրները ՀՀ սարքաշինության ոլորտում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Վ.Հ. Առաքելյան) ատենախոսության առաջին և երկրորդ գլուխները պատրաստ են, հավաքագրվել են նյութեր երրորդ գլխի վերաբերյալ: Տպագրվել է 1 հոդված:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Սյուզաննա Արմենի Պետրոսյանի «Նոր մետաքսի ճանապարհը և Հայաստանի տարանցիկ տրանսպորտային ուղիների (միջանցքների) զարգացման խնդիրները» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Գ. Աբրահամյան) ատենախոսությունը քննարկվել է ամբիոնի նիստում, հայցորդը հաշվի է առել նախապաշտպանության ժամանակ հնչած նկատառումները: Մասնակցել է 2 միջազգային գիտաժողովների: Հաշվետու տարում տպագրվել է 1 հոդված: Աշխատանքը պատրաստ է պաշտպանության:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Շուլի Արմենի Հակոբյանի «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները ՀՀ Շիրակի մարզում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Գ. Խաչատրյան) ատենախոսության շրջանակում կատարվել է գրականության ուսումնասիրում և նյութերի հավաքագրում: Ձևավորվել է վիճակագրական տվյալների շտեմարան: Պատրաստ է ատենախոսության 1-ին գլուխը:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Սարգիս Խաչատուրի Թևոսյանի «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի բարելավման հիմնական ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Խ. Մարկոսյան) ատենախոսությունը գտնվում է ավարտուն վիճակում և ներկայացվել է ամբիոն: Տպագրվել է 3 հոդված:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Հայկ Արմենի Մարգարյանի «Նորարարական ներդրումների արդյունավետության բարձրացման ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ա. Դավոյան) ատենախոսության շրջանակում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքի վերաբերյալ ամբիոնը հաշվետվություն չի ստացել, հայցորդը ամբիոնի նիստին չի ներկայացել:

3. Տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեցին, որ Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդները՝ բացառությամբ Հայկ Մարգարյանի, հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1. ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 06.09.2024թ. թիվ 1 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հայցորդների՝ բացառությամբ Հայկ Արմենի Մարգարյանի, կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Սարգիս Ավետիքի Վարդանյանի (6-րդ տարի), Գայանե Վարուժանի Հայրապետյանի (5-րդ տարի), Սյուզաննա Արմենի Պետրոսյանի (3-րդ տարի), Շուլի Արմենի Հակոբյանի (2-րդ տարի), Սարգիս Խաչատուրի Թևոսյանի (2-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել:

Հիմք ընդունելով «Կառավարման և գործարարության» ամբիոնի 06.09.24թ. թիվ 1 նիստի որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցորդ Հայկ Մարգարյանը չի ներկայացել նիստին՝ 2-րդ տարվա հայցորդ Հայկ Արմենի Մարգարյանի մեկ տարվա կատարած աշխատանքը համարել անբավարար և չատեստավորել:

Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդները՝ բացառությամբ Հայկ Արմենի Մարգարյանի, ատեստավորվեցին՝ միաձայն քվեարկությամբ:

2. Նոր ընդունված առկա ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում

2.1 ԼՍԵՑԻՆ. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նոր ընդունված առկա ասպիրանտի թեմայի և ղեկավարի հաստատման մասին հարցը:

2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ առկա ասպիրանտների քանակը տարեցտարի նվազում է, սակայն 2024-25 ուստարվա ընդունելության համար հատկացված բոլոր տեղերը լրացել են՝ ի տարբերություն նախորդ տարվա: Առաջարկեց ծանոթանալ նոր ընդունված առկա ասպիրանտների հետ:

2. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեման՝ «Արտաքին առևտրի դիվերսիֆիկացման և արտաքին շուկայում մրցունակության բարձրացման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Թորոս Թորոսյանը:

3. Տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեցին, որ ատենախոսության թեման վերաձևակերպման կարիք ունի: Համատեղ քննարկման արդյունքում ասպիրանտի թեման վերաձևակերպվեց՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի դիվերսիֆիկացման հիմնախնդիրները» վերտառությամբ:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

2.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 30.08.24թ. թիվ 1 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նոր ընդունված առկա ուսուցմամբ ասպիրանտ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի դիվերսիֆիկացման հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Թորոս Թորոսյանին:

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ:

2.2 ԼՍԵՑԻՆ. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված առկա ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատման մասին հարցը:

2.2.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Ալիսա Արենի Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեման՝ «Տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության տնտեսության թվայնացման պայմաններում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանը:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը մատնանշեցին, որ ատենախոսության թեման խմբագրման կարիք ունի: Համատեղ քննարկման արդյունքում ասպիրանտի թեման խմբագրվեց՝ «Տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում թվային փոխակերպումների պայմաններում» վերտառությամբ:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

2.2.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 06.09.24թ. թիվ 1 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված առկա

ուսուցմամբ ասպիրանտ Ալիսա Արենի Գևորգյանի՝ «Տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում թվային փոխակերպումների պայմաններում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ:

2.2.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Սիլվիա Սարգսի Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեման՝ «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում աշխատաշուկայի վերափոխման պայմաններում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանը:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը մատնանշեցին, որ ատենախոսության թեման խմբագրման կարիք ունի: Համատեղ քննարկման արդյունքում ասպիրանտի թեման խմբագրվեց՝ «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ աշխատաշուկայի վերափոխման պայմաններում» վերտառությամբ:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

2.2.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 06.09.24թ. թիվ 1 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված առկա ուսուցմամբ ասպիրանտ Սիլվիա Սարգսի Սարգսյանի՝ «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ աշխատաշուկայի վերափոխման պայմաններում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.թ., դոցենտ Կառլեն Խաչատրյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ:

2.3 ԼՍԵՑԻՆ. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի նոր ընդունված առկա ասպիրանտի թեմայի և ղեկավարի հաստատման մասին հարցը:

2.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Արման Մանվելի Բաբայանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեման՝ «Մուլտիմոդալ մոդելների կիրառությունը կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման խնդիրներում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Գևորգյանը:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Խաչատրյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեցին, որ ատենախոսության թեման խմբագրման կարիք ունի: Համատեղ քննարկման արդյունքում ասպիրանտի թեման խմբագրվեց՝ «Մուլտիմոդալ մոդելների կիրառությունը դասընթացների արդյունավետության գնահատման խնդիրներում» վերտառությամբ:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

2.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 09.09.24թ. թիվ 2 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի նոր ընդունված առկա ուսուցմամբ ասպիրանտ Արման Մանվելի Բաբայանի՝ «Մուլտիմոդալ մոդելների կիրառությունը դասընթացների արդյունավետության գնահատման խնդիրներում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Գևորգյանին:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ:

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորի օգնականներ նշանակելու մասին հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հայտնեց, որ ԵՊՀ-ում գործող «Պրոֆեսորադասախոսական կազմի օգնականի ներգրավելու կարգի» համաձայն արդեն երկրորդ անգամ ֆակուլտետի գիտխորհուրդը քննարկում է պրոֆեսորի

օգնականներ նշանակելու հարցը: Նշեց, որ ինչպես նախորդ անգամ, այս անգամ ևս միջնորդություն է ներկայացրել միայն Կառավարման և գործարարության ամբիոնը:

2. Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ գործող կարգով առաջնորդվելով իրազեկել են ֆակուլտետի ասպիրանտներին և մագիստրատուրայի ուսանողներին, հավաքագրել են ստացված հայտադիմումները: Պրոֆեսորի օգնական ունենալու ցանկություն են հայտնել ամբիոնի 6 աշխատակից՝ դոցենտ, տ.գ.թ. Ա.Հակոբջանյանը, դոցենտ, տ.գ.թ. Կ.Խաչատրյանը, պրոֆեսոր, տ.գ.դ. Գ.Վարդանյանը, պրոֆեսոր, տ.գ.դ. Հ.Սարգսյանը, դոցենտ, տ.գ.թ. Ն.Միրզոյանը, դոցենտ, տեխ.գ.թ. Հ.Զաքոյանը: Գործող կարգի համաձայն անձին որպես պրոֆեսորի օգնական ներգրավելու երաշխավորությունը քննարկվել է Կառավարման և գործարարության ամբիոնի նիստում՝ սահմանված ժամկետում:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց պրոֆեսորի օգնականներ նշանակելու վերաբերյալ Կառավարման և գործարարության ամբիոնի ընդունած որոշումը հաստատել քվեարկությամբ:

3. ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 06.09.24թ. թիվ 1 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի համար.

1) Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հովիկի Հակոբջանյանի օգնական նշանակել՝ առկա ուսուցման նույն կրթական ծրագրի 2-րդ կուրսի մագիստրանտ Գոհար Ալեքսանյանին:

2) ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյանի օգնական նշանակել՝ առկա ուսուցմամբ ասպիրանտ Սիլվիա Սարգսյանին:

3) Ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գագիկ Իշխանի Վարդանյանի օգնական նշանակել՝ առկա ուսուցմամբ ասպիրանտ Ալիսա Գևորգյանին:

4) Ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հայկ Լևոնի Սարգսյանի օգնական նշանակել «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի հեռակա ուսուցման 2-րդ կուրսի մագիստրանտ Տիգրան Մամիկոնյանին:

5) Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ, տ.գ.թ. Նարինե Էռնեստի Միրզոյանի օգնական նշանակել՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի հեռակա ուսուցման 2-րդ կուրսի մագիստրանտ Մարիամ Գյուրջյանին:

6) «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տեխ.գ.թ. Հարություն Վարազդատի Զաքոյանի օգնական նշանակել նույն ծրագրի հեռակա ուսուցման 2-րդ կուրսի մագիստրանտ Ֆլորա Ղազարյանին:

ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

4. ԼՍԵՑԻՆ. 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին հարցը:

4. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ԵՊՀ-ն 4 անվանական կրթաթոշակ է սահմանել ֆակուլտետի բարձր առաջադիմություն ունեցող և հասարակական ակտիվություն ցուցաբերող ուսանողների համար: Հավելեց, որ սահմանված կրթաթոշակներին կարող են հավակնել 4 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողները:

2. Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ, տ.գ.թ. Ն.Միրզոյանը նշեց, որ անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների ընտրությունը կատարվել է գործող կարգի պահանջներին համապատասխան և ներկայացրեց հավակնորդներին՝ Զինա Մելիքի Ղազարյան (3-րդ կուրս), Ալեն Միերի Ղազարյան (3-րդ կուրս), Արթուր Կամոյի Համբարձումյան (4-րդ կուրս), Սոնա Կարապետի Խաչատրյան (4-րդ կուրս):

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը դնել քվեարկության. երաշխավորել ընտրված ուսանողներին՝ ստանալ նշված անվանական կրթաթոշակները:

4. ՈՐՈՇԵՑԻՆ.

1) «Կառավարում» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Զինա Մելիքի Ղազարյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Տաթևացու անվան կրթաթոշակ:

2) «Ֆինանսներ» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանող Արթուր Կամոյի Համբարձումյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Հարությունյանի անվան կրթաթոշակ:

3) «Կառավարում» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Ալեն Միերի Ղազարյանին երաշխավորել ստանալու Ստեփան Սիտարյանի անվան կրթաթոշակ:

4) «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Կարապետի Խաչատրյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Հասրաթյանի անվան կրթաթոշակ:

2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ 2023 թվականից ֆակուլտետի նախկին շրջանավարտ, «Բիբլոս Բանկ Արմենիայի» գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանը, կնքված եռակողմ հուշագրի շրջանակում, ֆակուլտետի 5 լավագույն ուսանողների տրամադրում է կրթաթոշակ՝ ուստարվա համար: Հավելեց, որ գիտխորհրդի կողմից այս կրթաթոշակի հաստատման պահանջ չկա, սակայն

անհրաժեշտ համարեց ներկայացնել ուսանողներին, ովքեր արժանացել են սահմանված կրթաթոշակին՝ 2024-2025 ուստարվա համար `

1. Ասատրյան Վահե Զավենի (Ֆինանսներ 4-րդ կուրս),
2. Բենիամինովա Լուիզա Ռադիկի (Տնտեսագիտություն 4-րդ կուրս),
3. Խառատյան Միլենա Արթուրի (Ֆինանսներ 3-րդ կուրս),
4. Մաթևոսյան Վիկտորիա Վահագնի (Մագիստրատուրա 1-ին կուրս, (ԳՎ)),
5. Սվազյան Անահիտ Արամի (Մագիստրատուրա 1-ին կուրս, (Շուկայագիտություն)):

5. ԼՍԵՑԻՆ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու հարցը:

5. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ նախորդ ուստարում գործող կարգի համաձայն ֆակուլտետի դասախոսներից 10 լավագույններն արժանացել են դրամական պարգևի և ներկայացրեց խրախուսանքի արժանացած գործընկերների գրանցած արդյունքները: Հավելեց, որ կարգում փոփոխություններ կատարելու առաջարկությանն արձագանքել են Ֆինանսահաշվային ամբիոնից՝ պրոֆեսոր, տ.գ.դ. Վ.Բոստանջյանը, դոցենտ, տ.գ.թ. Է.Մաթևոսյանը, ասիստենտ, տ.գ.թ. Գ.Սահակյանը, Կառավարման ամբիոնից՝ դոցենտ, տ.գ.թ. Կ.Ասրյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանը, տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Սարիբեկյանը, իսկ մյուս երկու ամբիոնները միասնական կարծիք են ներկայացրել: Ընդգծեց, որ առաջարկությունների մեծ մասը ներառված է կարգի փոփոխված տարբերակում:

Ամփոփ ներկայացրեց կատարված փոփոխությունները: Նախ, հակիրճ անդրադարձավ խմբագրական բնույթի փոփոխություններին, հետո հանգամանալից ներկայացրեց դասախոսների արտալսարանային գործունեության գնահատման կարգում ներառված բաղադրիչներին տրվող միավորների փոփոխությունները:

2. Տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Խաչատրյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեցին, որ գործող կարգի լավարկման միջոցով հնարավոր կլինի դասախոսների արտալսարանային գործունեությունը և բուն դասավանդման գործընթացը հնարավորինս կապակցել՝ նպատակը դասախոսի գործունեության ներառականության բարձրացումն է:

Տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը նշեց, որ այս հարցի կապակցությամբ ծավալված բովանդակային քննարկումների արդյունքում գործող կարգն էապես բարելավվել է, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը նշեցին, որ այս տարբերակով կարգը դեռևս լավարկման կարիք ունի:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգի (նոր խմբագրությամբ) հաստատման հարցը դնել քվեարկության:

5. ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգը (նոր խմբագրությամբ):

Որոշումն ընդունվեց՝ քվեարկության 25 կողմ, 2 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

6. Ընթացիկ հարցեր

6.1 ԼՍԵՑԻՆ. Մրցութային հանձնաժողովի անդամի ընտրության վերաբերյալ հարցը:

6.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ նախորդ ուսումնական տարում ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկված անդամներից Գոհար Լևոնի Մկրտչյանը (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի) ուսումն ավարտել է և հանձնաժողովի կազմում ուսանողներին հատկացվող տեղը թափուր է: Հավելեց, որ մրցութային հանձնաժողովի անդամի ընտրության կապակցությամբ ուսանողական խորհուրդը կայացրել է որոշում և այն հնչեցնելու համար ձայնը փոխանցեց ուսանողական խորհրդի նորընտիր անդամ Բենիկ Արտեմի Բալայանին:

2. ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող Բենիկ Բալայանը հայտնեց, որ ուսխորհրդում կազմակերպված քննարկումների և ընտրության արդյունքում մրցութային հանձնաժողովի կազմում առաջարկում են ուսխորհրդի անդամ Անդրանիկ Զարմաիրի Հարությունյանի թեկնածությունը (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող):

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց ուսխորհրդի անդամ Անդրանիկ Զարմաիրի Հարությունյանին մրցութային հանձնաժողովի կազմում ընտրելու հարցը դնել քվեարկության:

6.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ուսանողական խորհրդի կայացրած որոշումը՝ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Անդրանիկ Զարմաիրի Հարությունյանին ընտրել Մրցութային հանձնաժողովի կազմում**:**

Անդրանիկ Զարմաիրի Հարությունյանը Մրցութային հանձնաժողովի անդամ ընտրվեց բաց քվեարկությամբ, միաձայն:

6.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդ Միեր Մերուժանի Օթարյանի ատենախոսության թեմայի վերաձևակերպման մասին հարցը:

6.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդ Մ.Օթարյանի ատենախոսության թեմայի վերաձևակերպման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ Կառավարման և գործարարության ամբիոնի 06.09.2024թ. թիվ 1 նիստում որոշվել է Միեր Մերուժանի Օթարյանի ատենախոսության «Տարածքային կառավարման հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեման վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Սարգսյան): Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հանգամանալից ներկայացրեց հայցորդի թեմայի վերաձևակերպման անհրաժեշտությունը:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

6.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 06.09.2024թ. թիվ 1 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդ Միեր Մերուժանի Օթարյանի ատենախոսության «Տարածքային կառավարման հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեման վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում», Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդի թեմայի վերաձևակերպման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

6.3 ԼՍԵՑԻՆ. Փոխատեղման հավակնորդ ուսանողների հաստատման վերաբերյալ հարցը:

6.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ այս հարցի քննարկումը որոշման կայացում չի պահանջում: Հավելեց, որ ըստ կարգի փոխատեղման արդյունքները հաստատում է ֆակուլտետի մանդատային հանձնաժողովը, իսկ գիտխորհրդում փոխատեղման արդյունքների մասին հաղորդումն ընդունվում է ի գիտություն: 2023-2024 ուստարվա արդյունքներով ֆակուլտետում փոխատեղման մասին տեղեկատվությունը ներկայացնելու համար ձայնը փոխանցեց ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանին:

2. Դեկանի տեղակալ, դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանը հաղորդմամբ ներկայացրեց 2023-2024 ուստարվա արդյունքներով ֆակուլտետում փոխատեղման մասին տեղեկատվությունը: Ընդգծեց, որ այս գործընթացին մասնակցում են ֆակուլտետում սովորող 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսեցիները և ըստ առաջադիմության՝ ձևավորված ՄՈԳ-ի միջոցով, կատարվում է փոխատեղումը: Արդյունքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ անվճար համակարգով սովորող ուսանողների շուրջ 33 տոկոսը ուսումը կշարունակի վճարովի համակարգում, իսկ բարձր առաջադիմությամբ վճարովի համակարգում սովորողները՝ շեմը հաղթահարելով, ուսումը կշարունակեն անվճար համակարգում: Հավելեց, որ վերջին տարիների արդյունքների համադրմամբ ՄՈԳ-ը բարձրացել է կրթական բոլոր ծրագրերում, իսկ մրցակցությունը՝ թեժացել:

6.3 ՈՐՈՇԵՑԻՆ. Ֆակուլտետի դեկանի տեղակալ, դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

6.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 90-ամյակի գիրք-ալբոմը հրատարակման երաշխավորելու վերաբերյալ հարցը:

6.4 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հիշեցրեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի համար 2024-2025 ուսումնական տարին հոբելյանական է, և այդ առիթով ֆակուլտետում նախատեսված միջոցառումների բաղկացուցիչներից մեկը սույն Գիրք-ալբոմի հրատարակումն է: Այս ուղղությամբ կատարված աշխատանքը ներկայացնելու համար ձայնը փոխանցեց գիտական խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանին:

2. Տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը նշեց, որ Գիրք-ալբոմի ստեղծման աշխատանքները մեկնարկել են դեռևս 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակից, հակիրճ և ամփոփ ներկայացրեց Գիրք-ալբոմի բովանդակությունը, շնորհակալություն հայտնեց աշխատանքներին մասնակցած անձանց: Ամփոփելով նշեց, որ Գիրք-ալբոմի աշխատանքները ներկա պահին շարունակվում են ԵՊՀ հրատարակչությունում:

Ներկաները մեծ ոգևորությամբ ընդունեցին Ֆակուլտետի հիմնադրման 90 և վերաբացման 40-ամյակներին նվիրված միջոցառումների շարքում Գիրք-ալբոմի հրատարակման փաստը:

3. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց Ֆակուլտետի 90-ամյակի գիրք-ալբոմը հրատարակման երաշխավորելու հարցը դնել քվեարկության:

6.4 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով կատարված աշխատանքի վերաբերյալ հաղորդումը և ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 90 և վերաբացման 40-ամյակներին նվիրված միջոցառումների շարքում Գիրք-ալբոմի հրատարակման կարևորությունը՝ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 90-ամյակի գիրք-ալբոմը երաշխավորել հրատարակման:

Ֆակուլտետի 90-ամյակի գիրք-ալբոմը երաշխավորվեց հրատարակման՝ քվեարկության 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ